391.99
U-66

19 NOV 2011

„ԱՇԽԱՏԱՆՔ"
ԳՐԱԴԱՐԱՆ № 6.

296
891.99
Մ-66
պր.

ՄԵՐ ՄՏՐԱԿԸ

891.99
Մ-66

ԳԻՆԸ 3 ԿՈՊԵԿ

28 JUN 2013

93718

Изд. СПС Армении

НАША ПЛЕТЬ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 391բ
ՏԻՐԱԺ 500.

28951

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ ԴԵՄ „ՊԻՏԻ ՁԿՈՎԵԼ"

Մատենավարուհի Լիզան՝ ցրիչ Գրիգորին հետաքրքրասիրներին զերծ մնալու համար, ինքզինքը կպահեր շատ սառն, լուրջ, կարճ՝ «բյուրոկրատ»։ Բայց յերբ սկսվեցավ կռիվը բյուրոկրատիզմի դեմ՝ բնական է, այլևս չեր կրնար շարունակել այդ ընթացքը։

Լիզան հանկարծ սկսեց ցրիչին հետ այնքան սիրալիր ըլլալ վոր փոխանակ հոնքերը կիտած «Գրիգոր» պոռալու՝ ժպիտը յերեսին՝ «Գրիգոր Ջան» կըսեր։

Գրիգորը «Ջան»-ին Ջանով պատասխանեց ու ընդամենը շաբաթ մը տևող սիրահարութենեն վերջ՝ զիրար առին։

Յերեկ տեսա Գրիգորին։ Սաստիկ դժբախտ կզգա ինքզինքը Լիզային առնելուն համար և Ջանդուի վարարելուն կսպասե՝ ինքզինքը չեար նետելու համար։

Խեղճ մարդ։

Արժե՞ր այսքան խիստ կռիվ մղել բյուրոկրատիզմի դեմ...

Վիշ։ Ըստ իս որիորդներուն թույլ տալու յե քիչ մը բյուրոկրատ ըլլալ. հիմա անանկ ժամանակներու յենք հասեր, վոր յեթե աղջիկ մը ժպտա յերեսներուս՝ սեր կպահանջենք...

ԳԻՏԱԿԱՆ

Շվեդացի յերկրաբան մը նկատեր է, վոր մեր յերկրագունդը տարվե տարի կթեթևնա։ Այս տարորդի-

նակ յերեւույթին պատճառը դեռ չի պարզված թեւ, բայց գիտնականներու մեջ կասկած կա, վոր Յերեւանի փոշին է պատճառը։

Ինչպես գիտեք Յերեւանի թաղերին այնքան փոշի կբարձրանա, վոր հակառակ իր կամքին՝ պետք է թեթեւնա...

Հիշյալ յերկրաշարժը հաշվեր է նաև, վոր թեթեւացման աս տեմպը յեթե շարունակվի՝ 1862 տարին յերկրագունդը այլեւս գոյություն չի ունենա...

ԼԵՌ ԿԱՄՈՅԱՐ

ՀԱՅԵԼՈՒՍ ՄԵՋ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԱԿԿՈՅԻՆ ՅԵՎ ՎԱՆՅԵՏՏԻԻՆ մահվան դատապարտելու փաստը, դաշնակցական «Հայրենիք» թերթը, վոր լույս է տեսնում Ամերիկայում, վորակեց վորպես արդարադատության որինակելի փաստ, մի պակասությամբ, վոր յոթ տարի ուշացավ։ Մենք գտնում ենք, վոր յեթե այդ յոթ տարին ել չլիներ, շատ ավելի կը նմանվեր դաշնակցական արդարադատության, վորն անշուշտ ավելի «որինակելի» յե։

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ վերանվանվեց ազգերի ընտանիքի, համաձայն Բրիանի ցանկության։ Այդ ընտանիքն անմիջապես ձևակերպվեց այս կերպ. հայր՝ Զեմբերլեն, մայր՝ Բրիան, իսկ մյուսները (մանր-մունրերը) յերեխաներ։ Ամերիկան մնում է այդ ընտանիքում, վորպես քեռի։

Ընտանիքի ներքին ընտանեկան կենցաղի մասին—հետևեցեք լրագրերին։

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

ԼԵՆԻՆԱԿԱՆ.—Սոցիալ նախկին նախագահը լեզվաբանության շուրջը դասախոսություն կարդաց։

ՂԱՐԱԲԻԼԻՍԱ.—Հանգստյան տանը թեյի ժամանակ իբար հացի գնդակներ խփելուց վիրավորվել է հանգստացողներից մեկի աչքը, վորն իր տեղից դուրս է յեկել։

ԵՋՄԻԱԾԻՆ.—Վարդապետներից մեկը յերեք որ է քնած է։ Նրա փայ ուտելեղենների բաժանման ժամանակ կռիվ ծագեց հայր սուրբերի մեջ, վորից մեկի մերուքի կեսը պոկվեց։

ՏԵՂԱԿԱՆ

— Յենթադրվում է, որ մայրաքաղաքիս ապրանքակչության թիվը բարձրացած կարող է լինել մինչև 100,000-ի։ Պատճառը խարջի խաղողն է։ Ընտանիք կա, որ մի սենյակում ապրում է հինգ հոգով,—15 հոգի հյուր ունի դանազան քաղաքներից։

— Բիսմարկ Մաթոսյանը, Նապոլեոն Բարթուղիմոսյանը, Գարիբալդի Աբիսողոմյանը և Վիլհելմ Սեզրոսորյանը իրար քիթ ու բերան ջարդեցին Արովյան փողոցի վրա։ Խուլիգանները ձերբակալված են։

ՊԱՏՄՎԱԾՔ

— Ամուսնացա...

— Ո՞վ, դո՞ւ. անհավատալի յե...

— Այո, յես, և հավատա...

—Ի՞նչպես, չեմ հավատա, դու ամուսնանում, դու որ կատաղի հակառակորդ եյիր ամուսնական կենցաղի...

— Այո, բայց «Բանկոոպ»-ի ամուրիական կենցաղի նկատմամբ ունեցած հակառակորդության կատաղությունը գերակշռեց...

— Չեմ հասկանում...

— Ամուսնանում եմ, «Բանկոոպ»-ի ճաշարանների ճաշերից ստամոքս ազատելու համար։

Նա իրեն զգում էր առողջ և յերջանիկ։

ԺԱՄԱՆՑԻ ՄՏՔԵՐ

*** Ա-րդ աստիճանի զպրոցավարան անգամ կարող է դրագետ լինել։

*** Անկարելի վոչինչ չկա. կարելի յե անգամ պուդրի չրքսող մեքենագրուհի ճարել։

*** Բյուրոկրատիզմն ու ռացիոնալիզացիան մի

վարիչի մոտ դժվար և ճարել, ինչպես մեղր ու կարագ «Բանկոոպ»-ի թեյարանում։ Մեկը լինելու դեպքում մյուսը բացակայում է անպայման։

ԳՐԱԿԱՆ-ԼԱԳԱՆ

Գործավար Մոսենցի անմիպ ստեղծագործություններից.

Յերբ նստած ես իմ դեմ դիմացը
ու ապում ես չըկ, չըկ, չըկ,
Թըրթռում է իմ խեղճ սիրտը,
արձագանքում՝ թըկ, թըկ, թըկ։
Ու խառնում եմ մատյանները՝
մոից-յէլիցը իրար,
Մոիցն անում—յես—յելիցը,
ահ իմ սիրտը դու տարար։

ԵԴՈՒԱՐԴ ԽՈՃԻԿ



ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԱՌՈՐՅԱՅԻՑ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՎՈՃԸ“

Գյուղացի կինը՝ ուսանողին.—Վորդի՛, ես ինչ թաղա ժամ են շինում։

Ուսանողը—Մայրիկ, սա ժամ չէ, այլ գյուղատնտեսական բանկի շենքն է։

Գյուղացի կինը—Բա եղ գմբեթն ու խաչերն ընչի՞ համար են, վորդի ջան։

Ուսանողը—Դա հայկական վոճն է, մայրիկ։

ԲԱՆԿՈՈՊԻ ՆՊԱՐԵՂԵՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

— Ձու ունե՞ք։
— Վոչ։
— Պանի՞ր։
— Վոչ։
— Կարագ։
— Վոչ։
— Մեղր։
— Վոչ։
— Հապա ինչ ունեք վերջապես։
— Խարջի խաղող, չաղանալու սեզոն է։

ՏՆՏԵՍՈՒՄԸ

— Զարմանալի բան է, վոչ մի կերպ վարիչին իր գրասենյակում գտնել չի կարելի։

— Նա դեմոկրատ մարդ է, ուրիշ վարիչների նման չի ուզում ժամանակը վատնել կաբինետում։

ՄԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՀՈՒ ԱՆԿԵՏԱՅԻՑ

— Սոցիալական դրությունը—ամուսի։
— Կրթությունը—Համալսարան
— Ընտանեկան դրությունը—հայրս անկուսակցական է, մայրս նույնպես է։
Կուսակցականությունը—համագրող։

ՌԵԺԻՄԸ

— Այս ինչ բան է, արդեն ժամը 9-ն է և Ձեր հիմնարկում դեռ վոչ վոք չկա։

— Որերը կարճացել են, չգիտե՞ս։

ՇԵՏԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

— Մեր վարիչը շատ լավ դեկավարում էր հիմնարկի գործերը, էլ ոգնականն ինչո՞ւ բերին։

— Ոգնականը հատկապես հետևելու յի խնայողության ռեժիմի և ռացիոնալիզացիայի կիրառմանը։

ԱԼԹ



ՄԱՆՐՈՒՆՔ

«ԺՈՂՈՎԱՍԵՐ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

— Ինչո՞ւ մեր հիմնարկի աշխատակիցները գնում են միշտ գլուխները քաշ արած.

— Վախենում են հանդիպել տեղկոմի տախտակին, վորտեղ միշտ գրվում է հայտարարություններ՝ ժողովների և այլ պարտականությունների մասին։

ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցիչ — Ընկեր Սոնյա, վո՞րտեղ է գտնվում Պոլիսը.

— Պարսկաստանում.

— Բայց քարտեզում նկարված է Տաճկաստանում.

— Мало чего. Այս հակառակ եմ գնում հին հասկացողություններին։ Надо быть самостоятельным.

ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ

Ուսուցիչ — Ի՞նչ աղանդներ կան մեզ մոտ՝ Հայաստանում.

Աշակերտ — Մալական—սուբբոտնիկներ, վոր շաբաթ որերը մինչև իսկ ձու չեն կլպում, լուցկի չեն վառում և հետո զոնապանների ինստիտուտը, վոր չոբեքշաբթի և տոն որերին փողոցները ջուր չեն շաղ տալիս, թեկուզ քաղաքը խեղդվում է փոշուց։

ՁԱՐՄԱՆԱԼԻ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

— Ընկեր բժիշկ, իմ աչքերը վատ եմ տեսնում...

— Այս բոպեյիս կասեմ... Վերցրու «Աշխատանքը»—կարդա՛. սա ինչ է տպված։

— Գների իջեցում.

— Պարզ տեսնո՞ւմ ես...

— Այո, լրագրում պարզ է. բայց մեր բանկոռալում հեչ չի յերևում։

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՈՒՐՍԵՐ

— Գո՞րծ եք ուզում. դուք վորևե կուրս ավարտե՞լ եք։

— Այո՛, Կիսլավոդսկում ջրաբուժական կուրս եմ անցել։

ՎՈՐԲԸ

— Հանցագործ, դուք սպանել եք ձեր մորը, ի՞նչ ունեք ասելու։

— Վողորմացեք վորբիս, դատավորներ։

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

— Աղ կա՞.

— Կար, բայց սպառվեց...

— Շաքարավա՛ղ.

— Կար, սպառվեց։

— Կոշիկ.

— Կար, սպառվեց։

— Վարիչ ունե՞ք.

— Կար. սպառվեց։

— Իսկ բողոքի գիրք.

— Կար, սպառվեց։

ՀՀ Ազգային գրադարան
NL0351253

43719